

ՄԵՐ ԽՈՍՔԸ

«Վէմ»-ի ղեկավար սկզբունքն է լինելու գիտական առարկայականութիւնն ու ճշմարտութիւնը, միայն ճշմարտութիւնը, ամբողջ ճշմարտութիւնը՝ համոզւած, որ անգամ ամենադառն ճշմարտութիւնը ակելի օգտակար է, քան ոսկեզօծ ու շաքարապատ սուտը¹»:

Սիմոն Վրացեան

70 տարի առաջ Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզում ընդհատվեց «Վէմ» երկամսեայ հանդէս մշակոյթի եւ պատմութեան» գիտական պարբերականի հրատարակութիւնը: Համեմատաբար կարճ ժամանակամիջոցում (1933-1939թթ.) «Վէմ»-ը հասցրել էր լուրջ ներդրում ունենալ հայագիտութեան ասպարեզում, մանավանդ՝ Հայոց պատմութեան ու մշակոյթի ուսումնասիրութեան գործում: Նրա խմբագիր, Հայաստանի առաջին Հանրապետութեան վերջին վարչապետ Սիմոն Վրացեանը հանդեսի շուրջն էր համախմբել Նիկողայոս Ադունցին, Հակոբ Սիրունուն, Արտաշես Աբեղյանին և այլ ճանաչված հայագետներին: Գիտնականների ներկա սերնդի համար ևս «Վէմ»-ը Հայոց պատմութեան ու մշակոյթի տարբեր հիմնահարցերի ուսումնասիրութեան անփոխարինելի աղբյուր է, քանզի նրա էջերում հրատարակված մի շարք փաստաթղթերի ու նյութերի բնագրերն այդպէս էլ չեն հայտնաբերվել:

«Վէմ» գիտական հանդեսը Մեծ եղեռնից հետո ուժացման վտանգի առջև կանգնած Սփյուռքում իրականացնում էր ոչ միայն գիտաճանաչողական, այլև հայապահպան գործառնություններ: Օտարութեան մեջ «Վէմ»-ը կարողացավ վառ պահել Հայոց պատմութեան ու մշակոյթի խորապէս հայեցի ընկալումը: 1930-ականների հայ իրականութեան գաղափարաքաղաքական երկփեղկվածութեան պայմաններում «Վէմ»-ը ստանձնեց նաև հայ մտավորականութեանը տարանջատող հատկաժանութեան ու դավանաբանական պատկերները հաղթահարելու գործը: Սիմոն Վրացեանն ինքը բազմիցս մատնանշում էր այն փաստը, որ «Վէմ»-ը զուտ գաղափարական ձեռնարկ է, նրա թիկունքում անհատ կամ կազմակերպուած յենարաններ չկան²» և 1930-ական թվականների տնտեսական ծանր պայմաններում համառոտրեն փորձում էր միջոցներ գտնել՝ հանդեսի տպագրութիւնը շարունակելու համար:

¹ «Վէմ» երկամսեայ հանդէս մշակոյթի եւ պատմութեան, 1933, ա. տարի, թիւ 1, էջ 4:

² Նույն տեղում, Ե. տարի, 1937թ., թիւ 1, էջ 1:

1939 թվականին, նախապատերազմյան Փարիզում, «Ձ. տարի՝ թի 5, յունուար-մարտ» մատենագիտական տվյալներով հրապարակված «ՎԷՄ»-ի վերջին՝ 80 էջանոց 25-րդ համարը վկայում է, որ Սիմոն Վրացյանը մինչև վերջ պայքարում էր հանդեսը պահպանելու համար և նա այդպես էլ «ՎԷՄ»-ի տպագրությունը չի ավարտել, այլ սոսկ ընդհատել է անհաղթահարելի արգելքների պատճառով³:

«ՎԷՄ» հանդեսի տպագրության վերսկսումը Հայաստանի երրորդ Հանրապետության մայրաքաղաք Երևանում, Հայաստանի ու Սփյուռքի գիտնական-հայագետների ցանկության արտահայտությունն է, ինչը նպատակ ունի շարունակել Սիմոն Վրացյանի և հայագիտության ասպարեզում նրա համախոհների կիսատ մնացած գործը: Ավելին, ներկա համեմատաբար բարվոք ներագգային պայմաններում «ՎԷՄ»-ը ձգտելու է Հայաստանի և Սփյուռքի հայագետների ջանքերը միավորող, լիարժեքորեն համահայկական գիտական պարբերականի դերակատարությամբ: Հայոց մտավոր ներուժի տարանջատվածության հաղթահարումը թույլ կտա իրականացնել Սիմոն Վրացյանի անկատար մնացած երազանքը և «ՎԷՄ»-ը դարձնել «...լառաջադէմ մտաւորականութեան կոալիսիոն, մի տեսակ խորհրդարան մտքի ու խօսքի...»⁴:

«ՎԷՄ» համահայկական հանդեսը վերսկսում է իր աշխատանքները 21-րդ դարին բնորոշ սկզբունքորեն նոր իրողությունների պայմաններում, որոնք նոր պահանջներ են ներկայացնում նաև՝ հայագիտությանը: Շնորհիվ տեղեկատվության արդի միջոցների, մեր օրերում քաղաքականության, տնտեսության, մշակույթի, գիտության և այլ ոլորտները վերածվել են ազգերի մեկ-միասնական՝ համաշխարհային «մրցադաշտի», ուր սկիզբ է առել սուր և անգիջում պայքար սեփական արժեքների տարածման և նպատակների հիմնավորման համար: Այլևս ոչ թե նախկին կարգավիճակով-մտավորականների, այլ ազգի մտավոր ներուժը համախմբող ու ներկայացնող՝ մտածող-ինտելեկտուալների նոր սերնդի ներկայացուցիչների միջև ընթացող այս մրցակցությունը ու նաև համագործակցությունը, առանձնապես սուր կերպարանք է ձեռք բերել հումանիտար և հասարակական գիտությունների բնագավառներում:

Նման պայմաններում հայագիտությունը՝ որպես Հայաստանի ու հայ ժողովրդի մասին առանձին գիտությունների՝ պատմագիտության, լեզվաբանության, գրականագիտության, հնագիտության, Հայաստանի պատմական և արդի աշխարհագրության ու ժողովրդագրության, մշակութաբանության, արվեստաբանության և բազում այլ առարկաների հանրագումար, հայոց հոգևոր և նյութական արժեքների ճանաչողության իր հիմնական՝ ավանդական գործառույթից զատ, ազգի ու պետության առջև ստանձնում է նաև որոշակի գիտական աշխարհայացք մշակելու առաքելություն՝

-նոր սերնդի ձևավորման համար անհրաժեշտ հայագիտական առարկաների դպրոցական ու բուհական ուսուցման,

-հայոց մշակութային ու գիտական ժառանգության պահպանման և ազգային հիմքի վրա զարգացման,

³ Ավելի մանրամասն տե՛ս «ՎԷՄ» համահայկական հանդեսի ներկա համարի Հավելվածը:

⁴ «ՎԷՄ», 1933, ա. տարի, թի 1, էջ 4:

- այս ամենը արտաքին աշխարհին մատուցելու և միևնույն ժամանակ նրանից բխող ազդեցության դրսևորումներից պաշտպանելու բնագավառներում:

Ավելի ամբողջական ինքնաճանաչողության միջոցով ազգի ինքնակատարելագործման, ինքնավերարտադրության և ինքնադրսևորման առաջադրանքի լուծման որակապես նոր մակարդակ ապահովելու հրամայականը ներկայումս մեր հարևան երկրների, առաջին հերթին՝ Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից Հայաստանին ու հայությանը հայտարարված «հիշողության պատերազմում» չպարտվելու գրավականն է:

Մինչդեռ, այս նոր մարտահրավերներն ընկալելու փոխարեն գիտնական-հայագետների նոր սերունդը աննկատ կերպով ներքաշվում է հայկական մտավոր-ինտելեկտուալ միջավայրում հետևողականորեն ներդրվող՝ «ծառայել գիտության»¹ը, թե՞ ազգին՝ փակուղային և արհեստական երկրնտրանքի մեջ: Դրսից պարտադրվող «գիտականության» և կեղծ, զավառամիտ «հայրենասիրության» դիմակայության արդյունքում արհեստականորեն ստեղծվող այս բանաձևի հետևախորքում դժվար չէ նշմարել օտար գաղափարաքաղաքական ազդակների սկնհայտ բախումը: Դրանց հավասարապես՝ «փայլվիլում», բայց վտանգավոր ցուցանակները ամենևին էլ չպետք է մոլորեցնեն հայագետների նոր սերնդին:

Ճշմարտության բացահայտման՝ գիտնականի առաքելությանը հավատարիմ մնալու անվիճելի անհրաժեշտության և ազգի առջև կանգնած նպատակներին ծառայելու ազգային ու քաղաքացիական պարտավորության միջև անլուծելի հակասություններ փնտրելու նման փորձերը գիտության ճանաչողական ու կիրառական նշանակությունը անհարկի, իսկ ոմանց կողմից նաև՝ գիտակցված կերպով միմյանց հակադրելու հետևանք են:

Չպետք է մոռանալ, որ հայագիտությունն այսօր էլ շարունակում է մնալ յուրաքանչյուրն իրեն բնորոշ ուսումնասիրության մեթոդներն ունեցող գիտությունների յուրահատուկ «փունջ»: Իսկ գիտական ճշմարտության բացահայտման խնդիրն իրականում լուծվում է միայն ու միայն կոնկրետ հայագիտական առարկաների ուսումնասիրության միջոցով: Ուստի հայագիտությունը կոչված է ամփոփել, համադրել դրանց արդյունքները և ոչ թե փոխարինել այդ գիտություններին կամ էլ դառնալ նոր գիտություն՝ «քաղաքական հայագիտություն»:

Քաղաքականությունն ու գիտությունը՝ իբրև զուգահեռաբար ծավալվող գործողությունների, գործընթացների և որոնումների հարաշարժ (դինամիկ) շարքեր, կարող են փոխադարձաբար օգտվել այդ ոլորտներից յուրաքանչյուրի նվաճումներից, արդյունքներից ու ձեռքբերումներից, բայց չպետք է փորձեն փոխարինել մեկը մյուսին:

Ներկա արագորեն փոխվող աշխարհում այս խնդիրների համադրության ճշգրիտ բանաձևը ճշմարտության ու արդարության անխզելի կապի և ներդաշնակ միասնության գաղափարն է, որը այսօր էլ խիստ արդիական է՝ որպես գիտական հետազոտություններն ու դրանց կիրառական նշանակությունը միմյանց հակադրելու փորձերը հաղթահարելու մեթոդ: Որպես արդեն շուրջ 120 տարի նման գաղափարաքաղաքական ելակետը որդեգրած ՀՅ Դաշնակցության աշխարհայացքային մոտեցումներին հավատարիմ գիտական հանդես՝ «Վեմ»-ը այսուհետև նույնպես հետևելու է քաղաքականության ու գիտության

գործառույթները հատկորեն տարանջատող՝ «Կեսարինը՝ Կեսարին, Աստծուինը՝ Աստծուն» իմաստությամբ:

Դարերով իրավագրված և ապա ցեղասպանության ենթարկված և իր տարածքների մեծամասնությունը կորցրած Հայաստանի ու հայ ժողովրդի մասին ամբողջական գիտական ճշմարտության բացահայտումը և միջազգային ասպարեզում այդ ճշմարտության լիարժեք վերականգնումը հավասարագոր է հայոց ներկա և ապագա սերունդների քաղաքական նպատակների արդարության ապացուցմանը: Հայաստանն ու հայությունը չեն հավակնում այլոց տարածքներին ու մշակույթին, ընդհակառակը, որպես իրավագրված երկիր և դարերով ճնշված ժողովուրդ, պաշտպանում են միայն ու միայն սեփական հայրենիքի ու մշակույթի հանդեպ իրենց անվիճելի իրավունքները:

Ճշմարտության ու արդարության անխզելի միասնության աշխարհայացքային մեկնակետից մեր ինքնաճանաչողության նպատակը ճշմարտության բացահայտումն է՝ արդարության վերականգնման համար: Սրանք որքան գիտաճանաչողական, նույնքան էլ ազգային-քաղաքական առաջադրանքներ են, որոնք միանգամայն համադրելի են և՛ փիլիսոփայական-աշխարհայացքային, և՛ գիտաճանաչողական և՛ գործնական-քաղաքական առումներով:

Առաջին առումով գիտությունը առնվազն՝ Կանտի ժամանակներից, լուծել է գիտնականի ինտելեկտուալ ու բարոյական պատասխանատվության հարաբերակցության խնդիրը հիմնվելով գիտական ճանաչողության նպատակի՝ մարդու մասին ուսմունքի վրա: Իսկ 20-րդ դարում այդ ամենն իր հաստատումն է գտել գիտական ճշմարտության որոնումը արդարության հաստատման համար պայքարի հետ զուգորդած՝ աշխարհի մեծագույն գիտնականների գործունեության տեսքով:

Երկրորդ՝ գիտաճանաչողական առումով մեր ավելի խոր ինքնաճանաչողությունը, այսինքն՝ սեփական արժեհամակարգի հնարավորինս ամբողջական բացահայտումը հայոց ազգային շահերի հետապնդման վճռորոշ պայմանն է, քանի որ առանց դրա անհնար է պատկերացնել ինքնակատարելագործման, այսինքն՝ առաջադիմության ճշգրիտ դեղատոմսերի մշակումը: Փնտրելով «գիտելիք մեզ համար»՝ ուղղակի հնարավոր չէ շրջանցել ճշմարտությունը, քանզի դա նշանակում է մշակել ոչ ճիշտ դեղատոմսեր, ինչից օգտվելը հանգեցնում է վնասակար հետևանքների:

Ուրեմն մնում է միայն երրորդ առաջադրանքը՝ մեր գիտելիքների օգտագործման ձևերի ու եղանակների ընտրությունը, ինչն ապացուցում է, որ բուն խնդիրն ամենևին էլ գիտական ճանաչողության մեջ չէ, այլ արդեն իսկ ձեռք բերված գիտելիքների կիրառական նշանակության: Թեև անվիճելի է, որ գիտական գիտելիքը երբեմն նաև երկսայրի սուր է, բայց վերջինիս ահռելի ուժը ճշմարտության բացահայտման և նրա միջոցով՝ արդարության հաստատման գործին ծառայեցնելու անհրաժեշտության տեսանկյունից ևս ճշգրիտ ինքնաճանաչողությունը և ճշմարտության վրա հիմնված ազգային շահերը չեն հակասում միմյանց: Քանզի երբ կեղծվում է Հայոց պատմության այս կամ այն դրվագը՝ հայ ժողովրդի ազգային շահերը ոտնահարելու համար, նրան հակադիր հայեցակարգի ստեղծումը, հակակշռելով նման փորձը, մրցակցային միջավայրում ձևավորում է որոշակի հավասարակշռություն, ինչը ճշմարտության հաղթանակին հասնելու նախապայ-

մանն է: Հասկանալի է, որ նման իրավիճակներում գիտնականը չի կարող սահմանափակել իր կողմից պաշտպանվող ճշմարտության «չափաբաժինը», որովհետև այդ ամենի արդյունքում մրցակցային միջավայրում կձևավորվի այնպիսի «հավասարակշռություն», որն ավելի մոտ է կեղծիքին, քան ճշմարտությանը:

Այսպիսով, մրցակցային նոր միջավայրում հայագիտության նվաճումների և ազգային շահերի ներդաշնակ համադրության միջոցով է միայն հնարավոր անընդհատ ուսումնասիրվող, պահպանվող ու հարստացվող ազգի քաղաքակրթական ներուժը դարձնել համամարդկային առաջադիմության ազդակներից մեկը:

Ըստ այդմ՝ «ՎԷՄ» համահայկական հանդեսն իր առջև նպատակ է դնում.

ա) Հայոց հավաքական հիշողության մեջ ամրագրված՝ Հայոց հայրենիքի ամբողջականության և Հայոց պատմության ու մշակույթի զարգացման շարունակականության ու անընդհատության աշխարհայացքային գույժ մեկնակետերի հիման վրա, նպաստել ազգի գիտական ինքնաճանաչողության որակապես նոր մակարդակի ձևավորմանը և նրա գոյության հիմքերի՝ վեմերի հետագա ամրապնդմանը,

բ) համակողմանիորեն քննելով օտար հայագիտական դպրոցների տեսական հարցադրումները՝ մշակել և կիրառել Հայոց պատմության, գրականության և այլ առարկաների գիտական ուսումնասիրության արդյունքները արտաքին աշխարհին մատուցելու նոր մեթոդաբանություն ու ռազմավարություն,

գ) գիտական քննադատության ենթարկելով Հայաստանի ու հայ ժողովրդի մասին մարդկության հավաքական հիշողությունը ջնջելու նպատակով մեր հարևան մի շարք երկրներում մշակված ու հետևողականորեն գործադրվող թշնամական ռազմավարությունները, ստեղծել դրանց դեմ պայքարի առաջադրանքների գիտատեսական բովանդակությունը ու գործնական աշխատակարգերը և դրանք մատուցել ազգին ու պետությանը:

Հիշյալ նպատակների իրականացման համար «ՎԷՄ» հանդեսը աշխատակցության է հրավիրում Հայաստանում ու Միյուռքում գործող հայագետ-գիտնականներին՝ հիմնվելով ներազգային լայն բազմակարծության սկզբունքի վրա:

«ՎԷՄ» համահայկական հանդեսը հրատարակվելու է եռամսյա պարբերականությամբ, նրա հիմնական բաժինները կրելու են մշտական բնույթ: Տպագրվելու են նաև հատուկ ուսումնասիրությունների շարքեր հայագիտությանը հուզող առավել կարևոր հիմնահարցերի վերաբերյալ:

Նկատի ունենալով «ՎԷՄ»-ի տպագրության վերսկսման փաստը՝ մեծ տեղ ենք հատկացնում ավագ սերնդի ճանաչված գիտնականների ամփոփիչ-ծրագրային հոդվածներին՝ «Հիմնաքարերին»: Գիտությունն այն ոլորտն է, ուր հնարավոր չէ նոր խոսք ասել՝ շրջանցելով նախորդների կատարած աշխատանքները և դրանց հիման վրա ձևակերպվող նոր առաջադրանքները: Ներկա՝ առաջին համարի «Հիմնաքարերն» են կազմում. ա) Հայաստանի աշխարհագրության ու հայկական տեղանունների համակարգի վրա խարսխվող հայոց ազգային աշխարհընկալման ընդհանուր ուրվագծերը, բ) արևմտյան հայագիտության և առաջին հերթին՝ եվրոպական պատմագիտական ու քաղաքագիտական մտքի կողմից Հայաստանի պատմության ու մշակույթի գիտական ընկալման՝ անցած երկու դարերի ընդհանուր հարաշարժը:

Այդ ամենից հետո միայն «Վէմ»-ը ներկայացնում է իր հիմնական բաժինները՝ պատմագիտության, գրականագիտության, տնտեսագիտության և այլ առարկաների վերաբերյալ նոր ուսումնասիրությունների տեսքով: «Վէմ»-ի բաժիններից յուրաքանչյուրի նախնական նպատակները պարզաբանվում են համապատասխան տողատակերում՝ խմբագրական համառոտ բացատրություններով:

Հաշվի առնելով իր տպագրության ընդհատումից ճիշտ 70 տարի անց՝ անկախ Հայաստանի մայրաքաղաքում «Վէմ»-ի վերահրատարակվելու հանգամանքը, հանդեսի առաջին (26-րդ) համարը եզրափակում է Փարիզում 1933-1939թթ. տպագրված «Վէմ»-ի հոդվածների Մատենագիտությունը:

Պևրգ Ս. Խուդինյան*
դասմ. գիտ. դոկտոր

OUR WORD

Gevorg S. Khudinyan
Doctor of History

* Այսուհետև՝ «Վէմ»-ի խմբագիրը հանդես է գալու Խմբ. կամ Գ. Խ. ստորագրություններով: